«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 1048-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ _____ 2021 թվականի N____ - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 1048-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N 1048-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1)Որոշման 2-րդ կետը լրացնել նոր 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) Սույն որոշման 2.1-րդ կետում նշված դեպքերում՝ մուտքի մաքսային մարմնից առաքման վայր հասցնելու համար «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վրա։».

2)Որոշման 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Մուտքի մաքսային մարմնում բեռնաթափման գործողություններ իրականացնելու անհնարինության դեպքում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ապրանքները կարող են ձևակերպվել «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ պայմանով, որ դրանք

առաքման վայրից վերաարտահանվելու են Հայաստանի Հանրապետության տարածքից՝ առաքման վայր ապրանքները հասցնելուց հետո՝ առավելագույնը 30 օրվա ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ